ԴԱՏԱԽԱԶԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հայկ Սարգսյան
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման ժամանակ առավել վիճահարույց հարցերից էին դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխման և դրանից հրաժարվելու պարագայում քրեական վարույթի հետագա ճակատագրի հիմնախնդիրները: Ասվածը վերաբերում է ինչպես դատախազի կողմից դատական քննության ընթացքում մեղադրանքը փոփոխելու ինստիտուտին և դրա հետ սերտորեն փոխկապակցված մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում քրեական վարույթի հետագա շարունակման հնարավորությանը, այնպես էլ դատարանի կողմից ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոխելու ինստիտուտին: Պատական չէ, որ դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխումը և դրանից հրաժարվելու հիմնախնդիրներն այն բացառիկ երկու հարցերն են, որոնց վերաբերյալ նախագծով, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ), սահմանվել է տարբերվող իրավակարգավորում:

Քրեական գործի դատական քննության ընթացքում չեն բացառվում այն իրավիճակները, երբ ապացույցների հետազոտման արդյունքում ի հայտ են գալիս այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող լինել մինչդատական վարույթում, և որոնք գործում առկա այլ փաստական հանգամանքների հետ օբյեկտիվորեն պահանջում են մեղադրյալին մինչդատական վարույթի ընթացքում առաջադրված մեղադրանքի փոփոխում կամ լրացում: Այդ փաստական հանգամանքների հիման վրա դատախազը պարտավոր է քրեադատավարական օրենքով սահմանված ընթացակարգով փոխել կամ լրացնել մինչդատական վարույթի ընթացքում ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը՝ նրան առաջադրելով նոր մեղադրանք[1]: Բացի դրանից, իրավակիրառ պրակտիկայում առաջանում են իրավիճակներ, երբ առանց փաստական հանգամանքների փոփոխության դատաքննության ընթացքում առաջանում է դատախազի կողմից մեղադրյալին վերագրվող արարքի իրավաբական որակում փոփոխելու անհրաժեշտություն, ինչը նույնպես հանգեցնում է նոր մեղադրանքի առաջադրման:

Քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման ինստիտուտը ավանդաբար սերտորեն փոխկապակցված է

[1] **«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգին հավանություն տալու մասին»** ՀՀ կառավարության 10.04.2011թ. N9 արձանագրային որոշում, 8.11 կետ:

դատական քննության ընթացքում մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտի հետ[2]՝ ելնելով այն հանգամանքից, որ երկուսն էլ մեղադրանքի տնօրինման ձև են: Սակայն մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտի խնդիրները շատ ավելի խորն են և կոնցեպտուալ ու գտնվում են ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական հարթությունում: Փոխարենը դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման ինստիտուտն ավելի փոխկապակցված է դատաքննության սահմանների հետ և չունի որևէ առնչության քաղաքական հարթության հետ[3]: Միաժամանակ դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման ինստիտուտը սերտորեն փոխկապված է նաև դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ մեղադրանքը փոփոխելու ինստիտուտի հետ:

Ելնելով վերոշարադրյալից՝ սույն ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ է մի կողմից հետազոտման առարկան՝ Նախագծով առաջարկվող դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման մոդելը, վերլուծել մյուս երկու ինստիտուտներից առանձին, մյուս կողմից դրա վերաբերյալ եզրակացությունները կատարել այդ երկու ինստիտուտների համատեքստում:

Վերջին յոթ տարիների ընթացքում ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով (այսուհետ՝ գործող օրենսգիրք), Հայեցակարգով և Նախագծով սահմանված են եղել կամ սահմանվելու նպատակով քննարկվել են դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման վերաբերյալ քրեական դատավարության իրավունքի տեսությանը հայտնի բոլոր հնարավոր ռեժիմները՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը, դատախազի կողմից մեղադրանքի փոփոխումը քննչական գործողությունների կատարմամբ (գործող օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի ռեժիմ), դատախազի կողմից սեփական հայեցողությամբ մեղադրանքի փոփոխումը առանց քննչական գործողությունների կատարման(գործող օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի ռեժիմ), դատարանի միջնորդության հիման վրա գլխավոր դատախազի կողմից մեղադրանքի փոփոխումը (գործող օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասի ռեժիմ), դատախազի կողմից փաստական հանգամանքներով մեղադրանքի փոփոխումը միայն օրենքով նշված հստակ պայմանների առկայության դեպքում (Նախագծի 283-րդ հոդվածի 2-րդ մաս), դատախազի կողմից մեղադրանքի ազատորեն փոփոխումը իրավական գնահատականի մասով (Նախագծի 283-րդ հոդվածի 3-րդ մաս):

Մինչև Նախագծով դատական քննության ընթացքում դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման վերաբերյալ որդեգրած կարգավորումների հետազոտումը անհրաժեշտ է նախ հակիրճ անդրադարձ կատարել գործող օրենսգրքի՝ մեղադրանքի փոփոխման նախկին և ներկա ռեժիմներին՝ վեր հանելով Նախագծով կատարված փոփոխությունների տարբերությունը և գերակայությունը:

Գործող օրենսգիրքն իր սկզբնական խմբագրությամբ նախատեսում էր լրացուցիչ նախաքննության ինստիտուտը: Գործող օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մեղադրողի միջնորդությամբ գործն ուղարկում էր լրացուցիչ նախաքննության, երբ առկա էին մեղադրանքը ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր:

Այսինքն՝ եթե դատական քննության ընթացքում առաջանում էին մեղադրյալին ա-

---

[2] Լեոնիդ Գոլովկո, Դատախազի կողմից մեղադրանքից հրաժարման և դատարանում մեղադրանքի փոփոխման ինստիտուտները: Հետխորհրդային զարգացումները տեսական մոլորումների պայմաններում, Պետություն և իրավունք N2, էջ 53:

[3] Նույն տեղում:

ռաջադրված մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնական մեղադրանքից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր, դատախազը միջնորդություն էր ներկայացնում դատարան՝ գործը լրացուցիչ նախաքննություն ուղարկելու մասին[4]: Միջնորդության բավարարման դեպքում քրեական գործը դատական քննության փուլից վերադառնում էր մինչդատական վարույթ՝ դատարանի վարույթից անցնելով նախնական քննություն իրականացնող մարմնի՝ քննիչի վարույթ: Մեղադրանքը կողմը, վերսկսելով նախաքննությունը, լրացնում էր նախկինում կատարված նախաքննության բացերը, վերացնում ապացույցների ձեռքբերման ընթացքում թույլ տրված խախտումները, փոփոխում կամ լրացնում մեղադրանքի փաստական և իրավական կողմերը՝ ապահովելով ձախողված մեղադրանքի վերականգումը:

24.07.2007թ. ընդունված N 710 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր ճանաչեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը նախատեսող այլ հոդվածներ:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշման մեջ ամրագրվեց այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է հանգուցալուծվի դատական նիստում[5]: Այսինքն՝ եթե քրեական գործը դատարանի կողմից ընդունվել է վարույթ, ապա այն այլևս չպետք է վերադարձվի նախաքննություն իրականացնող մարմնին, գործով պետք է բացառվեն նոր քննչական գործողությունների կատարումը, և գործը պետք է հետագա ընթացքն ու լուծումն ստանա հրապարակային դատաքննության շրջանակներում: Սույն իրավական դիրքորոշումը կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ քրեական դատավարությունում այս ինստիտուտի հետագա զարգացման վրա և դրվեց Հայեցակարգով դրա վերաբերյալ սահմանված կարգավորումների հիմքում:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշման հետևանքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 28.11.07թ. լրացվեց 309.1-րդ հոդվածը: Այդ հոդվածի ամբողջական վերլուծությունից բխում է, որ այն իր ընդունման պահին նախատեսում էր դատական քննության ընթացքում դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման իրավական երեք տարբեր ռեժիմներ՝

1) դատախազի նախաձեռնությամբ մեղադրանքը փոխելը քննիչի կողմից քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու ռեժիմով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր),

2) դատախազի նախաձեռնությամբ մեղադրանքը փոխելն առանց քննչական գործողություններ կատարելու ռեժիմի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մաս),

3) դատարանի նախաձեռնությամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մաս) դատարանը մինչև 10 օր ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին վերահաստատել մեղադրական եզրակացությունը: Վերջինս ՀՀ սահմանադրական դատարանը 2010թ. ապրիլի 2-ի N 872 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադ-

---

[4] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս: Երևան, Եր. համ. իրատ. 2003 թ., էջ 293:

[5] ՀՀ Սահմանադրական դատարանի 24.07.2007 թ. ընդունած N710 որոշում, էջ 13:

ության 19-րդ հոդվածին հակասող և անվավեր:

Գործող օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմներով մեղադրանքը փոփոխելու համար հիմք է մեղադրանքի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխությունը, որի հետևանքով փոխվում է արարքի իրավաբանական որակումը, կամ երբ նման փոփոխման դեպքում արարքի որակումը թեև մնում է նույնը, սակայն փոխվում է հանցակազմի հատկանիշների բովանդակությունը, օրինակ՝ փոփոխվում է միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը[6]:

Եթե հանցագործության և նոր ի հայտ եկած փաստական հանգամանքների բնույթն այնպիսին է, որ հնարավոր է դատաքննության շրջանակում դրանց վերաբերյալ քննություն կատարել, մեղադրողը պետք է կիրառի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասը, իսկ եթե հանցագործության բնույթն այնպիսին է, որ հնարավոր չէ դատաքննության ընթացքում դրանց վերաբերյալ կատարել քննություն, մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, պետք է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու նպատակով միջնորդի հետաձգել գործի դատական քննությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը դատախազի՝ նոր մեղադրանք առաջադրելու նպատակով դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդության բավարարման համար սահմանել է երկու պարտադիր նախապայմանի առկայություն՝

1.եթե դատական քննության ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում,

2.եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու:

Այս երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում գործն ուղարկվում է քննիչին նոր քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար: Մեղադրանքի փոփոխման նույնանման ռեժիմ սահմանված է նաև մի շարք այլ՝ մասնավորապես հետխորհրդային երկրների քրեական դատավարության օրենսգրքերում (Լատվիա՝ 461-462 հոդվածներ, Մոլդովա՝ 326, Լեհաստան՝ 328):

Այս մոդելը թեկուզ և ակնհայտորեն մեկ քայլ առաջ է լրացուցիչ նախաքննության ինստիտուտի համեմատ, սակայն իր ընդունման պահից շատերի կողմից որակվեց որպես լրացուցիչ նախաքննության ինստիտուտի քողարկված տարբերակ[7]: Դրա կիրառման դեպքում թեև ձևական առումով քրեական գործը շարունակում է գտնվել դատարանի վարույթում, և քննիչն այն իր վարույթ ընդունելու մասին որոշում չի կայացնում, սակայն փաստացի այն վերադառնում է քննիչի վարույթ, որը դատարանի կողմից գործի քննությունը հետաձգված ժամկետի ընթացքում կարող է ազատորեն իրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական և այլ դատավարական գործողությունները: Քրեական գործը դուրս է գալիս դատական վերահսկողությունից, թեկուզ և դա կատարվում է սահմանափակ ժամկետով, և ձևական առումով

[6] Տես ՀՀ վճռաբեկ դատարանի Սուրեն Կամոյի Նալբանդյանի վերաբերյալ 18.12.2007 թ. ՀՅՔԴ/0144/01/09 քրեական գործով կայացված որոշումը:

[7] ՀՀ Սահմանադրական դատարանի 02.04.2010 թ. ընդունված N872 որոշում, էջ 4:

քրեական գործը շարունակում է մնալ դատարանի վարույթում:

Մեր կարծիքով, գործող օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված մեղադրանքի փոփոխման կարգը մի կողմից հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 24.07.2007թ. ընդունված N 710 որոշման մեջ արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, ըստ որի՝ եթե քրեական գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է հանգուցալուծվի դատական նիստում, մյուս կողմից այդ նորմի կիրառման դեպքում մեղադրանքի կողմը, հնարավորություն ստանալով հրապարակային դատական քննության շրջանակներից դուրս փոխելու մեղադրանքը, փաստացի ուղղում է արդեն իսկ ձախողված մեղադրանքը, ինչն էականորեն խախտում է դատաքննության հիմքում դրված իրավահավասարության սկզբունքը:

Ինչ վերաբերում է գործող օրենսգրքով սահմանված մեղադրանքի փոփոխման մյուս ռեժիմին, ապա դրա համաձայն մեղադրողը կարող է մինչև դատարանի կողմից խորհրդակցական սենյակ հեռանալը ազատորեն սեփական հայեցողությամբ փոխել ինչպես մեղադրանքի փաստական կողմը, այնպես էլ իրավական գնահատականը: Այս ռեժիմով մեղադրանքի փոփոխման կամ լրացման համար բավարար է միայն մեղադրանքը պաշտպանող դատախազի դիրքորոշումը, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է սկզբնական մեղադրանքով: Մեղադրողի կողմից մեղադրանքը փոխելը դատարանին պարտավորեցնում է դատաքննությունն անցկացնել նոր մեղադրանքի շրջանակներում: Մեղադրանքի, այնպես էլ դրա պաշտպանության ծավալների վերաբերյալ մեղադրողի՝ որպես պետության անունից քրեական հետապնդում իրականացնող դատավարական սուբյեկտի դիրքորոշումը պետահշխանական ակտ է, որը պարտադիր է դատավարության մյուս սուբյեկտների համար[8]: Ընդ որում, օրենսդիրը որևէ պահանջ չի սահմանել փոփոխվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Այսինքն՝ լրացվող փաստական հանգամանքները կարող են մեղադրանքի կողմին հայտնի լինել նաև նախնական քննության ընթացքում, հաստատված լինել գործով ձեռք բերված ապացույցներով, սակայն ընդգրկված չլինեն մեղադրանքի ձևակերպման մեջ և չվերագրվեն որպես մեղադրյալի կողմից կատարված հանցագործության հատկանիշ:

Նշված ինստիտուտը հնարավորություն է տալիս դատախազին մի կողմից դատական քննության ընթացքում ազատորեն փոխել դատական քննության սահմանները, մյուս կողմից շտկել մեղադրական եզրակացությունը հաստատման ընթացքում մեղադրանքի ձևակերպման մեջ թույլ տրված թերությունները:

Այսպիսով, վերլուծելով գործող օրենսգրքի ինչպես սկզբնական խմբագրությամբ, այնպես էլ ներկայիս խմբագրությամբ սահմանված՝ դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման ռեժիմները՝ ակնհայտ է դառնում, որ դրանց առաջնային նպատակն է հնարավորություն ընձեռել դատախազին վերացնելու մինչդատական վարույթում թույլ տրված սխալներն ու բացթողումները, ուղղելու մեղադրանքի ձևակերպման մեջ առկա թերությունները և լրացնելու մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների շրջանակը՝ փրկելով մեղադրանքի կողմին արդարացման դատավճռից:

Փոխարենը Նախագծի վերլուծությունից բխում է, որ նախագծի հեղինակների նպատակն է եղել զրկել մեղադրանքի կողմին բոլոր վերոնշված հնարավորություններից: Այսպես, նախագծի 283-րդ և 284-րդ հոդվածների վերլուծությունից պարզ է դառ-

[8] ՀՀ Սահմանադրական դատարանի 28.12.2010 թ. ընդունված N931 որոշում, էջ 8:

նում, որ Նախագծով սահմանվել է երկու սկզբունքային նորարարություն՝

1. կենսագործվել է ՀՀ սահմանադրական դատարանի 24.07.2007 թ. ընդունված N 710 և 04.02.2011թ. ընդունված N 934 որոշումներով անրագրված այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է քննվի դատական նիստում՝ բացառելով դատարանի վարույթ ընդունված քրեական գործով նոր քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը:

2. Տարբերակվել են մեղադրանքը փաստական հանգամանքների և իրավական գնահատականի մասով փոխելու ռեժիմները՝ փաստական հանգամանքներով մեղադրանքի փոփոխությունը թույլատրելու համար սահմանելով անհրաժեշտ նախապայմանների առկայության պահանջ:

Նախագծի համաձայն՝ մեղադրանքը կողմն այլևս չունի որևէ օրենսդրական հնարավորություն դատարանի վարույթում գտնվող քրեական գործով նոր քննչական գործողություններ կատարելու: Բացառվել է նոր հանգամանքների ի հայտ գալու պարագայում դատարանի վարույթում գտնվող քրեական գործը քննիչին վերադարձնելու հնարավորությունը: Մեղադրանքի փոփոխությանը նախորդող գործընթացը պետք է լինի հրապարակային դատաքննության շրջանակներում և դուրս չգա դատական վերահսկողությունից: Հակառակ դեպքում կնսեմացվի անկախ, անկողմնակալ և մրցակցային դատարանի սահմանադրաիրավական դերը[9]:

Նույնիսկ եթե որոշակի բացառիկ դեպքերում մեղադրանքի փոփոխությունը պահանջի նոր ապացույցների ձեռքբերում, ապա դրա համար մեղադրողի միջնորդությամբ դատավարության բոլոր մասնակիցների կարծիքները լսելուց հետո և դատարանի որոշմամբ կարող են օգտագործվել բացառապես գործի դատական քննության ընթացքում հասանելի դատավարական միջոցները[10]:

Գործող օրենսգրքով սահմանված քննչական գործողությունների կատարմամբ մեղադրանքի փոփոխման ինստիտուտի բացառումը Նախագծի կարևորագույն բարեփոխումներից է, որը մի կողմից բարձրացնում է դատարանակենտրոն դատավարության դերը, մյուս կողմից զրկում մեղադրանքի կողմի թերի կատարված նախաքննությունը լրացնելու միջոցով փրկելու ձախողված մեղադրանքը: Այն խորհրդային քրեական դատավարության տարր հանդիսացող լրացուցիչ նախաքննության ինստիտուտից հրաժարվելուն ուղղված գործընթացի վերջին քայլն է, որի վրա վճռորոշ ազդեցություն են ունեցել ՀՀ սահմանադրական դատարանի 24.07.2007 թ. ընդունված N 710, 02.04.2010թ. ընդունված N 872 և 04.02.2011 թ. ընդունված N 934 որոշումները:

Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանի այս երեք որոշումներից յուրաքանչյուրը, տրամաբանորեն հաջորդելով միմյանց և հանդիսանալով իրենց նախորդի համեմատ մեկ քայլ առաջ, ուղղված են դատարանում մեղադրանքի փոփոխման ինստիտուտի վերափոխմանը՝ այն իրավական պետության չափանիշներին համապատասխանեցնելով: Նշենք, որ չնայած ՌԴ սահմանադրական դատարանը, որը 1999 թ. ապրիլի 20-ի որոշմամբ հակասահմանադրական ճանաչեց լրացուցիչ նախաքննության ինստիտուտը, չունեցավ ՀՀ սահմանադրական դատարանի հետևողականությունը. 2003 թ. դեկ-

[9] ՀՀ Սահմանադրական դատարանի 04.02.2011 թ. ընդունված N934 որոշում, էջ 17:

[10] «**Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգին հավանություն տալու մասին»** ՀՀ կառավարության 10.04.2011 թ. N9 արձանագրային որոշում, 8.11 կետ:

տեմբերի 8-ի որոշմամբ ՌԴ սահմանադրական այդ որոշմամբ փաստորեն վերականգնեց գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը[11], ինչը հետագայում հաստատվեց ՌԴ գերագույն դատարանի 2004 թ. մարտի 5-ի որոշմամբ[12]:

Նախածգով սահմանված՝ դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման ռեժիմը էականորեն տարբերվում է գործող օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ռեժիմից: Նախագծի 283-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասերի վերլուծությունից բխում է, որ նախագծով տարբերակվել են մեղադրանքի փոփոխումը փաստական հանգամանքների մասով և մեղադրանքի փոփոխումը իրավական գնահատականի մասով: Մինչև դրանցից յուրաքանչյուրի վերլուծությունը անդրադառնալը նախ անհրաժեշտ է պարզել, թե ըստ նախագծի որոնք են մեղադրանքի փաստական և իրավական կողմերը:

Ըստ նախագծի 6-րդ հոդվածի 42-րդ մասի՝ մեղադրանքը որոշակի անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մասին վարկած է, որն ունի փաստական և իրավական հիմնավորման կարիք:

Նախագծի 191-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ նշվում են անձի անունը, ազգանունը, հայրանունը և նրա վերաբերյալ այլ անհարժեշտ տվյալներ, մեղադրանքի փաստական հիմքը՝ մեղսագրվող արարքի էությունը, կատարման տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով, ինչպես նաև քրեական օրենսգրքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով պատասխանատվություն է նախատեսված անձին մեղսագրվող արարքը կատարելու համար (արարքի իրավական գնահատականը):

ՀՀ վճռաբեկ դատարանն օրենքի միատեսակ կիրառությանն ուղղված իր մի շարք դատական ակտերում արտահայտել է իրավական դիրքորոշումներ մեղադրանքի կառուցվածքի և դրա ձևակերպման վերաբերյալ, որոնք համահունչ են նախագծով սահմանված կարգավորումներին[13]: Վճռաբեկ դատարանը Գ. Ճաղարյանի և այլոց վերաբերյալ թիվ ԵՇԴ/0002/01/11 քրեական գործով նշել է. «Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար վտանգավոր և հակաիրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշներին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը:…Մեղադրանքում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը»:

Այսպիսով, նախագծի և վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշումների համատեղ

---

[11] ՌԴ Սահմանադրական դատարանի 2003 թ. դեկտեմբերի 8-ի որոշում:

[12] Постановлении Пленума Верховного Суда РФ от 5 марта 2004 г. "О применении судами норм Уголовно-процессуального кодекса Российской Федерации"

[13] Տե՛ս Արկադի Պատվականի Պապյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 18-19-րդ կետերը, Ալվարդ Չուբարի Ստեփանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0327/01/10 որոշման 16-րդ կետը, Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի և այլոց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 24.08.2012 թ. թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 24-25-րդ կետերը:

վերլուծությունից բխում է, որ մեղադրանքի փաստական կողմը հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների (հանցավորի, հանցագործության տեղից, ժամանակի և կատարման եղանակի) մանրակրկիտ նկարագրությունն է, իսկ հանցակցության պարագայում՝ նաև յուրաքանչյուր հանցակցի կոնկրետ գործողությունների, հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթի ու աստիճանի մանրամասն նկարագրությունը, որը համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի կոնկրետ հանցակազմի հատկանիշներին: Իսկ մեղադրանքի իրավական կողմը հենց ՀՀ քրեական օրենսգրքի կոնկրետ հանցակազմն է, այսինքն՝ քրեական օրենսգրքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով պատասխանատվություն է նախատեսված անձին մեղսագրվող արարքը կատարելու համար:

Մեղադրանքի փաստական կողմը այն փաստական հանգամանքների ամբողջությունն է, որոնց կապակցությամբ իրականացվում է քրեական հետապնդում, և որոնք լրիվությամբ ձևակերպված են դատարանին ուղարկված մեղադրական եզրակացության մեջ: Այսինքն՝ մեղադրանքի փաստական կողմը դատական քննության սահմաններն են: Իսկ մեղադրանքի իրավական կողմը այդ փաստական հանգամանքներին դատախազի տված իրավական գնահատականն է, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետն է, որի հանցակազմի հատկանիշներին է համապատասխանում մեղադրանքի փաստական կողմը:

Հետևաբար մեղադրանքի փաստական կողմի փոփոխությունները կարող են դրսևորվել՝

1. հանցավոր գործության առանձին դրվագներ ներառելով կամ հանելով,

2. մեղադրյալի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող նոր փաստական հանգամանքներ նախատեսելով կամ նախկինները հանելով,

3. նոր փաստեր ներառելով, որոնք վկայում են նախկինի համեմատ հանցագործության կատարման այլ մեղքի ձևի, շարժառիթի կամ հանգամանքների, հանցագործությունների հետևանքների, հանցակցության ձևերի կամ հանցագործության փուլերի մասին,

4. նոր փաստեր նախատեսելով, որոնք վկայում է այլ հանցագործության օբյեկտի կամ սուբյեկտի մասին:

Մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակման փոփոխությունը դրսևորվում է՝

1. քրեական օրենսգրքի մեկ հոդվածը մյուսով փոխարինելով,

2. քրեական օրենսգրքի միևնույն հոդվածի կետերը կամ մասերը փոխելով,

3. քրեական օրենսգրքի մեկ կամ մի քանի հոդվածները հանելով, եթե նախկինում մեղադրյալին մեղսագրվող արարքը որակված է եղել մի քանի հոդվածներով,

4. արարքը մի քանի հոդվածներով որակելով, եթե նախկինում որակված է եղել[14]:

Մեղադրանքը փաստական հանգամանքներով փոխելիս փոխվում են դատական քննության սահմանները, այսինքն՝ փոփոխվում կամ լրացվում է մեղադրյալին վերագրվող արարքի հիմքում դրված փաստերի շրջանակը: Իսկ մեղադրանքի իրավական հիմքի փոփոխման դեպքում փոխվում է բացառապես արարքի իրավաբանական որակումը, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով ո-

[14] **Добровольская Т. Н.** Изменение обвинения в судебных стадиях советского процесса. М., Юрид. Лит., 1997, с. 29.

ռակվել էր մեղադրյալի արարքը, փոխվում կամ լրացվում է քրեական օրենսգքի այլ հոդվածով, հոդվածի մասով կամ կետով:

Նախագծի 283-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փաստական հանգամանքների մասով առաջին ատյանի դատարանում կարող է փոփոխվել կամ լրացվել միայն հանրային մեղադրողի կողմից, եթե հիմնական դատալսումների ընթացքում հետազոտված ապացույցներով հաստատվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չէին և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և որոնք ինքնին կամ այլ փաստական հանգամանքների հետ միասին անհրաժեշտ են դարձնում մեղադրյալին նոր մեղադրանք ներկայացնելը:

Այսինքն՝ դատական քննության ընթացքում մեղադրանքը փաստական հանգամանքների մասով կարող է փոփոխվել միմիայն, եթե՝

1. հաստատվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չէին և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում,

2. այդ փաստական հանգամանքներն ինքնին կամ այլ փաստական հանգամանքների հետ միասին անհրաժեշտ են դարձնում մեղադրյալին նոր մեղադրանք առաջադրելը:

Առաջին պայմանը նշանակում է, որ դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատախազի ներկայացրած մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս պետք է գնահատի, թե արդյոք մեղադրանքի ծավալի վրա ազդող փաստական հանգամանքները մինչդատական վարույթում հայտնի են եղել, թե ոչ, և արդյոք դրանք կարող էին հայտնի լինել: Սույն պայմանը սահմանված է նաև գործող օրենսգրքով՝ որպես քննչական գործողությունների կատարմամբ զուգորդված մեղադրանքը փոխելու անհրաժեշտ նախապայման:

Դատարանը պետք է մերժի այդ միջնորդությունը, եթե մեղադրանքի փոփոխման կամ լրացման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքները մինչդատական վարույթի ընթացքում հայտնի են եղել վարույթի հանրային մասնակիցներին կամ կարող էին հայտնի լինել նրանց, եթե նրանք դրսևորեին պատշաճ ջանասիրություն դրանց բացահայտման ուղղությամբ:

«Հանգամանքներ, որոնք հայտնի չէին» ձևակերպման ներքո անհրաժեշտ է հասկանալ փաստական հանգամանքների այն շրջանակը, որոնք մինչդական վարույթի ընթացքում հայտնի չեն եղել վարույթի հանրային մասնակիցներին: Օրինակկ եթե մինչդատական վարույթի ընթացքում վկայի կողմից տրված ցուցմունքում հայտնած որևէ փաստ չի դրվել մեղադրյալին առաջադրված մեղադրանքի հիմքում, ապա գործը դատարանի վարույթ ընդունվելուց հետո դատախազը մեղադրանքի փոփոխման միջոցով չի կարող այդ փաստը ներառել մեղադրանքի փաստական կողմում:

«Հանգամանքներ, որոնք չէին էլ կարող հայտնի լինել» ձևակերպման ներքո անհրաժեշտ է հասկանալ փաստական հանգամանքների այն շրջանակը, որոնք վարույթի հանրային մասնակիցները օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ձեռք բերելու մինչդատական վարույթի ընթացքում: Այսինքն՝ եթե վարույթի հանրային մասնակիցը օբյեկտիվորեն կարող էր ձեռք բերել այդ տվյալը, սակայն անհրաժեշտ և բավարար քայլեր չի ձեռնարկել այդ ուղղությամբ, ապա ներկայացված միջնորդությունը ենթակա է մերժման: Օրինակ՝ եթե դատական քննության ընթացքում երկու վկայի առերեսման ընթացքում, որոնց միջև մինչդատական վարույթում առերեսում չի կատարվել, ի հայտ են

գալիս այնպիսի փաստեր, որոնք ենթադրում են մեղադրյալի վերագրվող մեղադրանքի փոփոխություն, ապա դատախազի միջնորդությունը ենթակա է մերժման: Կամ եթե մինչդատական վարույթում կոնկրետ հանգամանքների մասին ստացվում է օպերատիվ տեղեկատվություն, սակայն քննիչը այդ հանգամանքների շուրջ քննություն չի կատարել, ապա այդ հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ մեղադրանքի փաստական կողմից փոփոխման համար:

Այսպիսով, փաստական հանգամանքների մասով մեղադրանքի փոփոխումը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն անհուղղակի անդրադառնում է այն հարցին, թե արդյոք մինչդատական վարույթի ընթացքում վարույթի հանրային մասնակիցներն ապահովել են նախաքննության բազմակողմանիության և լրիվության պահանջը: Եթե դատարանը պարզում է, որ նոր փաստական հանգամանքները ձեռք չեն բերվել այդ պահանջի խախտումով, ապա ներկայացված միջնորդությունը մերժվում է, և նոր փաստական հանգամանքները չեն ընդգրկվում մեղադրյալի արարքի փաստական կողմում, թեկուզ և դրանք օբյեկտիվորեն վկայում են մեղադրյալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարելը:

Երկրորդ պայմանի համաձայն՝ անհրաժեշտ է փաստական հանգամանքների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնի նոր մեղադրանքի առաջադրման:

Նոր ի հայտ եկած փաստական հանգամանքների փոփոխությունը Նախագծի 283-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով մեղադրանքը փոխելու հիմք է, եթե այդ հանգամանքների փոփոխությունը առաջացնում է հանցակազմի հատկանիշների փոփոխություն: Եթե մեղադրական եզրակացությունում նկարագրված փաստական հանգամանքները դատական քննության ընթացքում ենթարկվում են այնպիսի փոփոխության, որը հանցակազմի հատկանիշների տեսանկյունից չունի քրեաիրավական նշանակություն, ապա դրանք չեն կարող Նախագծի 283-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հիմք հանդիսանալ:

Անհրաժեշտ է մեղադրանքի փաստական հիմքը կազմող հանգամանքների այնպիսի փոփոխություն, որը կհանգեցնի՝

1. արարքի իրավաբանական որակման փոփոխման (քրեական օրենսգրքի հոդվածի, հոդվածի մասի կամ կետի փոփոխություն կամ լրացում) կամ

2. թեև արարքի իրավաբանական որակումը կմնա նույնը, սակայն կփոխվի հանցակազմի հատկանիշների բովանդակությունը (օրինակ՝ անձը մեղադրվում է բռնություն գործադրելով կատարած բռնաբարության մեջ, սակայն դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները, որոնցով հաստատվում է, որ արարքը կատարվել է ոչ թե բռնությամբ զուգորդված, այլ բռնության սպառնալիքի գործադրմամբ):

Այսպիսով մեղադրանքի փոփոխման համար անհրաժեշտ է, որպեսզի նոր ի հայտ եկած հանգամանքները հանցակազմի հատկանիշների տեսանկյունից ունենան քրեաիրավական նշանակություն:

Փաստական հանգամանքների փոփոխությունը պետք է կապված լինի՝

1. ոտնձգության այլ օբյեկտի հետ,

2. հանցագործության այլ սուբյեկտի հետ,

3. հանցագործության կատարման այլ վայրի, ժամանակի և եղանակի հետ, եթե այն հանցակազմի հատկանիշների տեսանկյունից ունի քրեաիրավական նշանակություն,

4. հանցագործության կատարման այլ մեղքի տեսակի, նպատակի, շարժառիթների հետ, եթե վերջիններս հանցակազմի պարտադիր հատկանիշ են,

5. միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արար-

քի փոփոխման հետ (օրինակ՝ անձը մեղադրվում է սեռական կամ այլ շահագործման ձևով մարդկանց թրաֆիկինգի ներգրավելու մեջ, սակայն դատաքննության ընթացքում հիմնավորվում է, որ շահագործման ձևը ոչ թե խոցելի վիճակի օգտագործումն է, այլ հարկադիր աշխատանքը),

6. միևնույն հանցակազմի հակահիրավական եղանակի փոփոխման հետ (օրինակ ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը որպես մարդկանց հավաքագրելու հակահիրավական եղանակ թվարկում է խարդախությունը և խոցելի վիճակի օգտագործումը: Եթե անձին մեղադրանք է առաջադրվել անձի խոցելի վիճակն օգտագործելու եղանակով հավաքագրելու համար, սակայն դատաքննության ընթացքում պարզվում է, որ արարքը կատարվել է ոչ թե խոցելի վիճակն օգտագործելու, այլ խարդախության եղանակով),

7. բլանկետային դիսպոզիցիայի բովանդակությունը կազմող օրենսդրական ակտերի փոփոխության հետ (օրինակ՝ անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 134-րդ հոդվածի հատկանիշներով (հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի պահելը), սակայն ճիշտ չի վկայակոչվել այն օրենսդրական ակտը, որի պահանջները խախտելով՝ ամբաստանյալը տուժողին պահել է հոգեբուժական հիմնարկներում),

8. միևնույն հանցագործության այլ փուլերի կամ հանցակցության այլ տեսակի և ձևի հետ[15]:

Նախագծի 284-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային մեղադրողն առաջին ատյանի դատարանում մեղադրանքը պաշտպանում է ապացույցների վրա հիմնված իր ներքին համոզմամբ: Սույն օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստական հանգամանքների առկայության դեպքում հանրային մեղադրողը միջնորդում է դատարանին ժամանակ տրամադրել՝ մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու համար:

Այսինքն՝ եթե դատախազը գտնում է, որ ի հայտ են եկել մինչդատական վարույթում վարույթի հանրային մասնակից անհայտ հանգամանքներ, որոնք օբյեկտիվորեն չէին կարող հայտնի լինել մինչդական վարույթում ու ինքնին կամ այլ փաստական հանգամանքների հետ միասին անհրաժեշտ են դարձնում մեղադրյալին նոր մեղադրանք առաջադրելը, ապա նա պարտավոր է միջնորդել դատարանին՝ անհրաժեշտ ժամանակ տրամադրել մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փոփոխելու: Դատարանը ներկայացված միջնորդությունը կարող է մերժել, եթե բացակայում են սույն օրենսգրքով նախատեսված երկու պայմանները կամ դրանցից մեկը:

Նախագծի 283-րդ մասի 3-րդ մասի համաձայն՝ մինչև եզրափակիչ դատական ակտ կայացնելու համար առաջին ատյանի դատարանի՝ առանձին սենյակ հեռանալը հանրային մեղադրողն իրավասու է փոխել մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը: Այսինքն՝ մինչև առաջին ատյանի դատարանում հիմնական դատալսումների ավարտը դատախազը կարող է որոշում կայացնել փոփոխելու մեղադրյալին առաջադրված մեղադրանքի իրավական կողմը: Ի տարբերություն փաստական հանգամանքներով մեղադրանքի փոփոխման ռեժիմի՝ նախագծի 283-րդ մասի 3-րդ մասի կիրառման համար անհրաժեշտ չեն որևէ նախապայմանի առկայություն և դատարանի համաձայնություն: Հետևաբար, նախագծի 284-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասը նրա նկատմամբ կիրառելի չէ:

Անհրաժեշտ է նշել, որ գործող օրենսգրքի համեմատ դատախազի կողմից մեղադրանքի իրավական գնահատականը փոխելու լիազորությունն էականորեն կորցրել է իր

---

[15] **Ա. Ղամբարյան,** Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքից հրաժարվելը: Եր. Իրավունք, 2009, էջ 53:

կարևորությունը՝ պայմանավորված Նախագծով նախատեսված դատարանի իրավասությանը՝ ազատորեն փոխել մեղադրանքի իրավական կողմը, այդ թվում նաև՝ խստացման առումով[16]: Դատարանն ազատ է մեղադրանքի փաստական կողմի շրջանակներում մեղադրյալի արարքին իրավաբանական գնահատական տալու հարցում: Ելնելով դատարանի կողմից մեղադրանքի փաստական հանգամանքների շրջանակներում նյութական նորմն ազատ կիրառելու իրավասությունից՝ դատախազի կողմից այդ փաստական հանգամանքներին տրված իրավական գնահատականը գործի ելքի վրա չի կարող ունենալ էական ազդեցություն և նշանակություն:

Ըստ նախագծի 284-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու դեպքում հանրային մեղադրողը կազմում է նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշում, որը փոխարինում է մեղադրական եզրակացությանը և պետք է համապատասխանի մեղադրական եզրակացության բովանդակությանը ներկայացվող պահանջներին: Նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշումը տրվում է դատարանին և դատական վարույթի մասնակիցներին: Դատարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ողջամիտ ժամկետ է տրամադրում մեղադրյալին և նրա պաշտպանին, տուժողին, գույքային պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին:

Այսինքն՝ մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու յուրաքանչյուր դեպքում դատախազը պարտավոր է կազմել նոր մեղադրանքը, որը պետք է համապատասխանի մեղադրական եզրակացության կառուցվածքին: Այդ փաստաթուղթը փոխարինելու է դատական ուղարկված մեղադրական եզրակացությանը և գծելու է դատական քննության ծավալները: Նման պահանջի սահմանումը միանշանակ արդարացված է, քանի որ մեղադրական եզրակացությունն է այն փաստաթուղթը, որը որոշում է դատական քննության սահմանները և հնարավորություն տալիս մեղադրյալին արդյունավետ կազմակերպելու իր պաշտպանությունը: Այս փոփոխությամբ նախագծի հեղինակները լուծել են գործող օրենսգրքում մեղադրանքի փոփոխման ընթացակարգում առկա անհստակությունները, ինչի հետևանքով իրավակիրառ պրակտիկայում հակասություն էր առաջացրել ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների միջև[17]:

Կատարված փոփոխությունների վերլուծությունից բխում է, որ՝

1. մեղադրանքի կողմը զրկվում է մինչդատական վարույթի ընթացքում թույլ տված սխալները մեղադրանքի փոփոխման միջոցով ուղղելու հնարավորությունից: Նման կարգավորումն էականորեն բարձրացնում է դատախազի պատասխանատվության աստիճանը նախնական քննության նկատմամբ հսկողություն իրականացնելիս, մեղադրանքը ձևակերպելիս, մեղադրական եզրակացություն հաստատելիս:

---

[16] Տե՛ս **Հայկ Սարգսյան**, Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման հիմնահարցերն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի, Պետություն և իրավունք, թիվ 1(59), 2013, էջ 146:

[17] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 18.12.2009թ. ՀՅՔՐԴ2/0144/01/09 որոշումը և դրա վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի 04.02.2011թ. ընդունված N 934 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ սահմանել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված իրավական ռեժիմներով դատարանում մեղադրանքը փոփոխելիս մեղադրողի կողմից պետք է կայացվի ինչպես մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու մասին որոշում, այնպես էլ կազմվի նոր մեղադրական եզրակացություն, իսկ ՀՀ սահմանադրական դատարանը սահմանել է, որ նոր մեղադրական եզրակացություն կազմվել չի կարող, քանի որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի նորմերով այդպիսի իրավակարգավորում նախատեսված չէ:

2. Դատական քննության սահմանները կարող են փոփոխվել միմիայն բացառիկ դեպքերում, երբ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չէին և չէին էլ կարող հայտնի լինել մինչդատական վարույթում, և որոնք հանգեցնում մեղադրյալին առաջադրված մեղադրանքի փոփոխության: Նման փաստական հանգամանքների բացակայության դեպքում դատարան ուղարկված մեղադրական եզրակացությամբ կանխորոշված դատական քննության շրջանակները փոփոխման կամ լրացման ենթակա չեն, ինչը բարձրացնում է մեղադրական եզրակացության՝ որպես քրեական դատավարությունում դատավճռից հետո կարևորությամբ երկրորդը համարվող փաստաթղթի նշանակությունը:

3. Դատախազը դադարում է հանդես գալ որպես մեղադրանքն ազատ տնօրինող և հետևաբար դատական քննության ընթացքը կանխորոշող սուբյեկտ, ինչը նպաստում է դատական քննությունում դատարանի դերի և նշանակության բարձրացմանը: Նշվածը պայմանավորված է ոչ միայն մեղադրանքի փոփոխման վերաբերյալ Նախագծով սահմանված կարգավորումից, այլ նաև դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում քրեական գործով վարույթն ընդհանուր կարգով շարունակվելու վերաբերյալ կարգավորմամբ:

4. Կատարված փոփոխություններն ամրապնդում են կողմերի իրավահավասության սկզբունքը, քանի որ դատախազի կողմից անձի արարքին տրված իրավական գնահատականը կորցնում իր նշանակությունը, և դատարանն այլևս կաշկանված չէ դրանով, ինչի պարագայում օրենքի կիրառման և մեկնաբանման վերաբերյալ մեղադրանքի կողմի դիրքորոշումն այլևս չունի որևէ առավելություն պաշտպանության կողմի դիրքորոշման համեմատ:

Այս փոփոխությունների քննադատները որպես փաստարկ կարող են նշել, որ նման կարգավորման պարագայում թերի նախաքննություն կատարելու կամ մեղադրական եզրակացության մեջ սխալներ թույլ տալու հետևանքով փաստացի հանցանք կատարած անձը կարող է խուսափել քրեական պատասխանատվությունից: Սակայն նման հակափաստարկներն անընդունելի են, քանի քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած անձի մեղավորությունն ապացուցելու և նրան պատասխանատվության ենթարկելու խնդրին հակադրվում է անձի պաշտպանության իրավունքը, և մեղադրյալը կամ ամբաստանյալը չպետք է մեղադրանքի կողմի թույլ տված խախտումների կամ սխալների վերացման պատճառով հայտնվի անբարենպաստ վիճակում: Ավելին, բազմակողմանի և լրիվ նախաքննություն կատարելու և մեղադրանքի ձևակերպման մեջ ու մեղադրական եզրակացությունում սխալներ չթույլատրելու պարագայում նման խնդիրներ չեն առաջանա:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է եզրակացնել, որ դատական քննության ընթացքում դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման նախագծով առաջարկվող մոդելը գործող օրենսգրքի համեմատ ենթարկվել է հիմնարար փոփոխությունների: Այն նախագծի առաջնային բարեփոխումներից է ՀՀ քրեական դատավարությունում խորհրդային քրեական դատավարության տարր հանդիսացող լրացուցիչ նախաքննության ինստիտուտից հրաժարվելու ու տեսականորեն կատարյալ և պրակտիկորեն կիրառելի մեղադրանքի փոփոխման ինստիտուտ ամրագրելուն ուղղված վերջին քայլն է:

THE ISSUES OF ALTERING THE CHARGE BROUGHT AGAINST THE ACCUSED BY THE PROSECUTOR — UPON ITS OWN INITIATIVE — AS SET FORTH IN THE NEW DRAFT CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Hayk Sargsyan
PhD student of the Chair of Criminal Proceedings and Criminalistics YSU

The research work outlines the issues of altering the charge brought against the accused by the prosecutor — upon its own initiative — as set forth in the new draft Criminal Procedure Code of the Republic of Armenia.

The work analyzes the conditions and the procedure for altering the charge brought against the accused by the prosecutor — upon its own initiative — under the primary and the current editions of the Criminal Procedure Code of the Republic of Armenia; the conditions and the procedure have been compared with the rules of altering the charge based on legal and factual circumstances as prescribed by the new draft Criminal Procedure Code of the Republic of. A conclusion has been made that the availability, in the new draft Criminal Procedure Code of the Republic of Armenia, of the procedure for altering the charge by the prosecutor upon its own initiative is a result of the successive development of this institute in the sphere of criminal proceedings of the Republic of Armenia and, both by its theoretical justification and its applicability in practice, it prevails over all the options previously prescribed or considered regarding this institute.

ВОПРОСЫ ИЗМЕНЕНИЯ ПРЕДЪЯВЛЕННОГО ОБВИНЕНИЯ ПРОКУРОРОМ - ПО СОБСТВЕННОЙ ИНИЦИАТИВЕ - В ПРОЕКТЕ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Айк Саргсян
Аспирант Кафедры уголовного производства и криминалистики ЕГУ

В статье излагаются вопросы изменения предъявленного обвинения прокурором - по собственной инициативе - как указано в проекте нового Уголовно-процессуального кодекса Республики Армения .

В работе анализируются условия и порядок изменения предъявленного обвинения прокурором - по собственной инициативе - условия и процедура была

сравнена с правилами изменения обвинения на основе правовых и фактических обстоятельств, как это предписано проектом Уголовно-процессуального кодекса Республики Армения. Сделан вывод о том, что наличие в новом проекте Уголовно-процессуального кодекса Республики Армения процедуры для изменения обвинения прокурором по собственной инициативе является результатом последовательного развития этого института, и как по своей теоретической обоснованности и практическому применению превалирует над существовавшими прежде вариантами правового регулирования.

Բանալի բառեր – դատախազի կողմից մեղադրանքի փոփոխումը, ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի, մեղադրանքը

Keywords: Altering the charge by the prosecutor, new draft of Criminal Procedure Code of the Republic of Armenia, criminal indictment.

Ключевые слова: изменения предъявленное обвинение прокурором - по собственной инициативе, проект нового Уголовно-процессуального кодекса Республики Армения, обвинение